

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Քանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ
pdemirchyan@mail.ru

ORCID iD: 0009-0003-6265-1421

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-27

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քանալի բառեր - Ն. Աղբալյան, Ավ. Իսահակյան, գրականության պատմություն, ժողովրդականություն, ազգային, համամարդկային:

Ամփոփում

Գրական քննադատ և գրականության տեսաբան, հայտնի ազգային, պետական, գրական-մշակութային գործիչ Նիկոլ Աղբալյանն աչքի ընկնող տեղ է գրավում XIX դարավերջի և XX դարակեսի հայոց պատմության զարգացումների մեջ:

Նրա ազգային գործունեության և գրական-գիտական հետաքրքրությունների համատեքստում առանձնակի ընդգծվում է հայոց գրականության պատմության ստեղծման խնդիրը: Ընդ որում, նա տարբերակում էր ինչպես ազգի կենսագրությունը (որ ավելի հին է) գրականության կենսագրությունից, այնպես էլ գրական պատմությունը (առանձին հեղինակների քննությունը) գրականության պատմությունից (որ ամբողջական ընդգրկում ունի):

Ն. Աղբալյանի տեսությունը հանգում էր նաև «գրական տեսակների» պատմության կամ իր բնորոշմամբ՝ «նրանց հոլովոյթի» ստեղծմանը, որն ուղղված է լինելու որոշակի դարաշրջաններում «բարձրագույն կետերի» կամ «գագաթների» հայտնաբերմանը՝ այդպիսով նպաստելով նաև ազգային ինքնաճանաչողության խթանմանը:

Ն. Աղբալյանը հայոց գրականության պատմությունը բաժանում էր երեք փուլի՝ հին, միջնադարյան և նոր: Նշելով, որ վերջին տարիներին աննախադեպ մեծացել է հետաքրքրությունը սեփական գրականության նկատմամբ՝ նա ևս ոգևորությամբ մասնակցում է իրեն ժամանակակից

արևելահայ և արևմտահայ գրողների՝ Գ. Սունդուկյանի, Ռաֆֆու, Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Սիամանթոյի և այլոց հրատարակած երկերի քննությանն ու գնահատությանը: Այդ շարքում, իհարկե, իր ուրույն տեղն ունենա Ավետիք Իսահակյանը:

XX դարասկզբին Ավ. Իսահակյանին ուղղված նամակներում Ն. Աղբալյանն արդեն իսկ կանխատեսում էր ապագա մեծ գրողի ծնունդը՝ հետագայում՝ 1945 թ., Վարպետի 70-ամյակի առիթով գրած խոսքում արձանագրելով, թե «Մարգարեությունս շիտակ դուրս եկավ...»: Այդ խոսքում Ն. Աղբալյանը տվել է նաև Ավ. Իսահակյանի անհատականության և ստեղծագործության առավել ամբողջական գնահատականը: Ներկայացնելով Վարպետի ներաշխարհային զարգացման ուղին՝ պատանեկան մաքուր ու երազուն հոգուց մինչև հասուն շրջանի «դառնացած սիրտ ու մտայնություն...»՝ նա կարևորել է տառապանքից չհարանալու, մշտապես բարությանն ու մարդասիրությանը ապավինելու բանաստեղծի էությունը:

Ն. Աղբալյանն ընդգծում է նաև սեփական ազգի սրտին, ինչպես նաև տիեզերական կյանքին համահունչ խոսելու ներքին մղումը՝ որպես բարձր արվեստի, ժողովրդի ճշմարիտ սիրուն արժանանալու չափանիշ:

Ն. Աղբալյանն արձանագրում է **իսահակյանական դպրոցի** գոյության փաստը՝ նշելով, որ «Ան կուգա Հ. Թումանյանեն հետո և ձեռք կմեկնի Վ. Տերյանին: Իր անունն ու գործը անկորնչելի ստացվածքն են Հայոց գրականության»:

PETROS DEMIRCHYAN

Doctor of Philology

Institute of Literature after M. Abeghyan of the NAS RA

pdemirchyan@mail.ru

ORCID iD: 0009-0003-6265-1421

AVETIK ISAHAKYAN IN NIKOL AGHBALYAN'S SYSTEM OF VIEWS ON THE HISTORY OF ARMENIAN WRITING

Key words: N. Aghbalyan, Av. Isahakyan, history of literary, nationality, national, universal.

Abstract

Nikol Aghbalyan, literary critic and theorist, a prominent national, state, literary, and cultural figure, holds a notable place in the developments of Armenian history from the late 19th to the mid-20th century.

Within the context of his national activity and literary-scientific interests, a special emphasis is placed on the issue of creating the history of Armenian literature. He distinguishes the biography of a nation (which is older) from the biography of literature, as well as literary history (the study of individual authors) from the history of literature (which encompasses the entire literary tradition).

N. Aghbalyan's theory also amounted to the creation of a history of "literary types", or, as he defined it, "their epilogue", which would be aimed at discovering "high points" or "peaks" in certain eras, thus also contributing to the promotion of national self-knowledge.

N. Aghbalyan divided the history of Armenian literature into three stages: ancient, medieval and modern. Noting that in recent years there has been an unprecedented increase in interest in his own literature, he also enthusiastically participates in the examination and evaluation of the works published by contemporary Eastern and Western Armenian writers: G. Sundukyan, Raffi, Gh. Aghayan, Hovh. Tumanyan, Siamanto and others. Of course, Avetik Isahakyan also had his own place in this series.

In his letters to Av. Isahakyan at the beginning of the 20th century, N. Aghbalyan had already predicted the birth of the future great writer, later, in 1945, in a speech written on the occasion of the Master's 70th anniversary, recording that "My prophecy came true...". In that speech, N. Aghbalyan also gave the most complete assessment of Av. Isahakyan's personality and creativity. Presenting the path of the Master's inner worldly development, from the pure and dreamy soul of youth to the "bitter heart and mentality..." of adulthood, he emphasized the essence of the poet not to be evil from suffering, to always rely on kindness and humanity.

N. Aghbalyan also emphasizes the inner urge to speak in harmony with the heart of one's own nation, as well as with cosmic life, as a criterion for high art, for deserving true love from the people.

N. Aghbalyan records the fact of the existence of the Isahakyan school, noting that "He will come to H. "After Tumanyan, he will also reach

out to V. Teryan. His name and work are an indestructible legacy of Armenian literature.”

ПЕТРОС ДЕМИРЧЯН

Доктор филологических наук

Институт литературы им. М. Абеяна НАН РА

pdemirchyan@mail.ru

ORCID iD: 0009-0003-6265-1421

АВЕТИК ИСААКЯН В СИСТЕМЕ ВЗГЛЯДОВ НИКОЛА АГБАЛЯНА НА ИСТОРИЮ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Ключевые слова: Н. Агбальян, Ав.Исаакян, история литературы, народность, национальный, общечеловеческий

Аннотация

Литературный критик и теоретик литературы, известный национальный, государственный, литературный и культурный деятель Никол Агбальян занимает видное место в развитии армянской истории конца XIX — начала XX вв.

В контексте его национальной деятельности и литературно-научных интересов особо выделяется проблема создания истории армянской литературы. При этом он различал как биографию нации (которая более древняя) от биографии литературы, так и литературную историю (рассмотрение отдельных авторов) от истории литературы (которая имеет всеобъемлющий охват).

Теория Н. Агбалаяна также сводилась к созданию истории «литературных типов» или, как он ее определял, «их развития», которая была бы направлена на обнаружение «высших точек» или «вершин» в определенных эпохи, тем самым также способствуя национальному самопознанию.

Н. Агбальян разделил историю армянской литературы на три этапа: древний, средневековый и современный. Отмечая, что в последние годы наблюдается небывалый рост интереса народа к собственной литературе, он также с энтузиазмом участвует в рассмотрении и оценке произведений, опубликованных современными восточно- и западноармянскими пи-

сателями: Г. Сундукяном, Раффи, Г. Агаяном, Ов. Туманяном, Сиаманто и другими. Конечно, свое место в этом ряду имел и Аветик Исаакян.

В начале XX века в своих письмах Ав. Исаакяну Н. Агбальян уже предсказывал рождение будущего великого писателя, а позже, в 1945 году, в речи, написанной по случаю 70-летия Мастера, он отметил, что «Мое пророчество сбылось...» В этой речи Н. Агбальян также дал наиболее полную оценку личности и творчеству Исаакяна. Представляя путь внутреннего развития Мастера, от чистой и мечтательной души юности до «горького сердца и умонастроения» зрелости, он подчеркивал суть поэта не быть злым от страданий, всегда опираться на доброту и человечность.

Н. Агбальян также подчеркивает внутреннее стремление говорить в гармонии с сердцем собственного народа, а также космической жизнью, как критерием высокого искусства, для того, чтобы заслужить настоящую любовь народа.

Н. Агбальян фиксирует факт существования школы Исаакяна, отмечая, что «Он идет после О. Туманяна и подает руку В. Терьяну. Его имя и творчество являются нерушимым наследием армянской литературы».

Ներածություն

Գրական քննադատ և գրականության տեսաբան, հայտնի ազգային, պետական, գրական-մշակութային գործիչ Նիկոլ Աղբալյանն աչքի ընկնող տեղ է գրավում XIX դարավերջի և XX դարակեսի հայոց պատմության զարգացումների մեջ: Նրա ազգային գործունեության և գրական-գիտական հետաքրքրությունների համատեքստում առանձնակի տեղ էր զբաղեցնում հայոց գրական-մշակութային զարգացման, դասական և ժամանակակից գրականության, առանձին գրողների երկերի քննության ու գնահատության և, ի վերջո, այդ ամենի համադրմամբ ու ամբողջացմամբ, հայոց գրականության պատմության ստեղծման խնդիրը: Բարդագույն մի նպատակ, որը՝ ժամանակի այլ հետազոտողների (Մ. Աբեղյան, Ա. Տերտերյան և ուրիշներ) հետ միասին, նա փորձել է իրականացնել և որը, կարելի է ասել, տասնամյակներ՝ մինչև իր կյանքի ավարտը, սկեռուն գաղափար է եղել նրա համար:

Կարևոր է նշել նաև, որ Ն. Աղբալյանի տեսական-գրականագիտական հայացքներն ու ըմբռնումները ձևավորվել էին հիմնականում Օգյուստ Կոնտի պոզիտիվիստական իմաստասիրության, Հիպոլիտ Տենի կուլտուր-պատմական ուսմունքի, գրականության պատմաբան, ազգագրագետ Ալեքսանդր Պիպինի տեսակետների, ինչպես նաև ռուսական դեմոկրատական քննադատության (Բելինսկի, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով), արվեստի ժողովրդայնության սկզբունքների ազդեցությամբ:

Հայոց գրականության պատմության ստեղծման աղբալյանական չափանիշները

Ն. Աղբալյանը ելնում էր արմատական այն սկզբունքից, որ «Ազգ ու գրականություն մեռնում են այն ժամանակ, երբ դադարում են իրենց լեզուն խոսել և այդ լեզվով գրավոր արտահայտել իրենց ներաշխարհը: Այս հաշվով հայոց գրականության պատմությունը այդ գրականության կենսագրությունն է»: Ընդ որում, շեշտում էր՝ «Տարբերե՛նք. ո՛չ ազգի, այլ գրականության կենսագրությունը, որովհետև ազգերը շատ ավելի հին են, քան իրենց գրականությունը» (Աղբալյան, 2005: 7-8): Տարբերակումներից մեկն էլ վերաբերում էր **գրական թե գրականության պատմություն** ըմբռնումներին: Ըստ նրա՝ «մինչդեռ գրական պատմությունը հետազոտում ու ներկայացնում է զատ-զատ հեղինակներ և անջատ կարգով, գրականության պատմությունը խոսում է բոլոր հեղինակների մասին և ժամանակի կարգով»: Ըստ էության՝ այդպիսով Ն. Աղբալյանը տարբերակում էր գրական քննադատությունը գրականության պատմությունից, քանզի եթե առաջին դեպքում կարող են լինել թերիներ՝ հանիրավի չհետազոտված «մի հեղինակ, մի միջավայր, մի երկ», ապա դրանք պետք է երևան գրական ընթացքն ավելի համակողմանիորեն և ամբողջությամբ քննող ու դասակարգող գրականության պատմության մեջ:

Այս առումով Ն. Աղբալյանը տալիս է բնորոշումներ, որոնք յուրօրինակ բանաձևերի արժեք ունեն խնդրո առարկայի վերաբերմամբ: Այդպես նա սահմանում է, որ «Գրականության պատմագրի դիտակետն ավելի վեր է, քան գրական պատմագրի տեսակետը»: Եվ ապա՝ «Երկերը բնորոշում են հեղինակին, հեղինակները՝ ազգին»:

Հիշեցնելով հայտնի ասույթը՝ «Քաջերի սահմանն իրենց զենքն է»¹, բանաձևում է, թե «Իմացական կյանքն իբր զենք կիրարկելով՝ մինչև ո՞ր հասած են որևէ ազգի քաջերը իմացական մարզի մեջ, ո՞ր են նրանց սահմանները և ի՞նչ են աշխարհակալած. այս է, որ պետք է ցուցադրե գրականության պատմագիրը, մի նոր ու վերին տեսակետով նայելով հեղինակների և նրանց երկերի վրա»։ Այդ առումով նա արդեն իսկ մի շարք կարևորագույն աշխատանքներ էր ձեռնարկել։ 1902 թ. դեկտեմբերի 6-ին Ավետիք Իսահակյանին գրած նամակում տեղեկացնում էր, թե «Կազմում եմ մեր պարբերական մամուլի նյութերի ցանկը ու դրան զուգահեռ մի քանի ուրիշ ցուցակներ», այդ թվում՝ տեղեկություններ նշանակալից գրողների, տպագրված գրքերի, օտար հեղինակներից կատարված թարգմանությունների և այլնի մասին, ինչը, ըստ նրա՝ «մի նախապատրաստական աշխատանք» էր իր ապագա հոդվածների, կենսագրականների և, ի վերջո, «իբր վախճան ու վերջնական նպատակ» այդ ամենի՝ «Հայոց նոր գրականության պատմության» ստեղծման համար (Աղբալյան, 2003: 30)։

Ն. Աղբալյանի տեսությունը հանգում էր նաև «գրական տեսակների» պատմության, կամ իր բնորոշմամբ՝ «նրանց հոլովույթի» ստեղծմանը, որն ուղղված է լինելու «գրական միատեսակ վաստակների համեմատական ուսումնասիրությամբ» որոշակի դարաշրջաններում միևնույն «գրական տեսակի հորինման և արտահայտության բարձրագույն կետերի» հայտնաբերմանը, քննությանն ու արժևորմանը։ Տեսակետ, որն ավելի մատչելի և ըմբռնելի դարձնելու համար, դիմում է նաև պատկերավոր խոսքի օգնությանը. «Բարձրագույն կետը պետք է ցուցադրվի կարկառուն, իսկ գրական տեսակի հոլովույթը բոլորվի նրա շուրջ իբր մթնոլորտ»։

Վերջապես, առավել ընդհանրական, գլխավոր եզրակացությունն այն էր, որ ցուցադրելով «այն հուները, որոնց միջով անցած է ազգի իմացական կյանքը», գրականության պատմությունը դառնում է «մի շատ զորավոր միջոց (...) ազգային ինքնաճանաչողության» (Աղբալյան, 2005: 9-10)։

¹ Տե՛ս «... ասում են քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է...» (Մովսես Խորենացի, 1968: 83)։

Ն. Աղբալյանը հայոց գրականության պատմությունը բաժանում էր երեք փուլի՝ հին, միջնադարյան և նոր շրջաններ: Արձանագրելով ամբողջական պատմության ստեղծման ճանապարհին եղած բոլոր պակասությունները² նկատելի գոհունակությամբ նշում էր, որ վերջին տարիներին «մի չտեսնված հետաքրքրություն է նկատվում մեր հասարակության մեջ դեպի սեփական գրականությունը», ստեղծվել է «մի որոշ հասարակություն, որ ապրում է գրական շահերով», ինչն ապացույց էր այն իրողության, որ «գրականությունը դառնում է մի գործը գործոն...»: Արդյունքում՝ «Մտավորական դասը հասնում է ազգային ինքնագիտակցության», սկսվել է «վերագնահատության ընդարձակ շրջան, արթնանում է քննադատական միտքը» (Աղբալյան, 2005: 47-48):

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը Նոր շրջանի հայոց գրականության համատեքստում

Ն. Աղբալյանը ևս ոգևորությամբ մասնակցում է իրեն ժամանակակից գրական երկերի վերլուծությանն ու գնահատությանը: Անցյալ դարի 10-ական թվականներին Թիֆլիսի «Հորիզոն» թերթում մեկը մյուսի հետևից տպագրվում են տարբեր աղիթներով գրված նրա գրախոսականներն ու հոդվածները՝ արևելահայ ու արևմտահայ գրողների՝ Րաֆֆու, Գ. Սունդուկյանի, Ղ. Աղայանի, Հովհ. Հովհաննիսյանի, Ալ. Ծատուրյանի, Հովհ. Թումանյանի, Ստ. Զորյանի, Սիամանթոյի և այլոց վերաբերյալ: Այդ շարքում, անշուշտ, իր ուրույն տեղն ունեւ նաև Ավետիք Իսահակյանը:

Տասնամյակներ անց՝ 1945 թ., Վարպետի ծննդյան 70-ամյակի առիթով գրած խոսքում Ն. Աղբալյանը նշում է, որ ինքն է եղել 1898-ին լույս տեսած բանաստեղծի անդրանիկ «փոքրիկ գրքույկի»՝ «Երգեր ու վերքեր»-ի, «առաջին գնահատողը»՝ նկատելի գոհունակությամբ արձանագրելով, թե «Մարգարեությունս շիտակ դուրս եկավ...» (Աղ-

² Նախորդ երկու շրջանների գրականության «քնագրերի գիտական հրատարակություն», «Հին գրականության հետազոտությունը դեռ չէ դուրս եկած բանասիրական բովից: Ծատ երկերի երևման ժամանակն իսկ դեռ ստուգապես հայտնի չէ», «Միջնադարյան մեր տաղերգուները նոր միայն ուշադրության և հետախուզումի առարկա դարձան» (նկատի ունեւ նաև Վ. Բրյուսովի, Յու. Վեսելովսկու, Մ. Գորկու ձեռնարկած ժողովածուները) և այլն (Աղբալյան, 2005: 14):

բայան, 2005: 75-76): Մինչև «Երգեր ու վերքեր»-ի տպագրությունը՝ 1898 թ. ապրիլից, Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները տպագրվել են Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում, որին աշխատակցում էր նաև Նիկոլ Աղբալյանը: Արդեն որոշած լինելով առանձին ժողովածուով հրատարակել իր գործերը՝ 1898 թ. Օդեսայից գրած նամակում Իսահակյանը խնդրում է վերջինիս դիմել խմբագիր Ա. Արասխանյանին, որ իրեն «տեղ տա» ամսագրում և իր կազմած «տետրից» մի քանի բանաստեղծություն տպագրի, քանի որ շատ է ուզում «Մուրճ»-ում տպագրվել՝ «իբրև լուրջ օրգանում»: Հետաքրքիր է, սակայն, որ թեև տարիներ անց՝ 1925 թ. Ռուբեն Դարբինյանին գրած նամակում խոստովանում է, թե «Ես առհասարակ ուշք չեմ դարձնում իմ մասին եղած գրախոսականների վրա» և դեռ ավելին՝ «Ամենալավ քննադատը ես ինքս եմ իմ գրվածքների մասին» (Իսահակյան, 2021: 97), այստեղ համառոտակի փորձում է «ուղղորդել» ապագա քննադատներին՝ անկասկած, բանաստեղծի իր էությունն ու քերթվածները ճիշտ ընկալելու և վերլուծելու նպատակով: «Իմ ոտանավորները խորությամբ քննելիս բացատրեք մի քանի տողով լիրիզմի նշանակությունը,- գրում է նա,- ապա անցեք ոտանավորներին: Քննադատելիս աչքի անցրեք և՛ տետրում գրածներս... Մի փոքր երկար կանգ առեք ժողովրդական մոտիվների վրա: Դիտեցեք և՛ այն, որ իմ հանգերը այսպես կոչված «ճոխ» տեսակիցն են...»: Բերելով մի քանի օրինակներ՝ «մրմունջ-տրտունջ, շողա-ցողա, դողա-լողա...», նշում է՝ «Հենց ժողովրդական տարրը...» (Իսահակյան, 2020: 39-40): Լիովին հաշվի առե՛լ է, արդյոք, Նիկոլ Աղբալյանն Ավ. Իսահակյանի նշած դիտարկումները, թե՞ ոչ, դժվար է ստույգ ասել, բայց մի բան պարզ է, որ նրանց ընկալումներն ու պատկերացումները՝ բանաստեղծական արվեստի վերաբերյալ, հիմնականում համընկնում էին: Դա հստակորեն երևում է հենց 1898 թ. Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում «Երգեր ու վերքեր»-ի մասին Ն. Աղբալյանի տպագրած ծավալուն գրախոսականից: «Երգ ու վերք» խորագիրը կրող այդ գրության հենց սկզբից նա արձանագրում է, որ «հեղինակը կարողանում է երգել իր «երգերն ու վերքերը» ժողովրդի լեզվով ու ոգով, որ այդ գրքոյկն իսկական բանաստեղծությունների հաաքածու է»: Ապա հղում անելով Թիֆլիսում հրատարակվող «Ադրի» ամսագրում Ղ. Աղայանի արած դիտարկմանը, թե «բանաս-

տեղծներ շատ ունինք, բայց բան ստեղծողներ՝ շատ սակաւ», հավաստում է, որ «Այդ սակաւաթիւ անունների փոքրիկ ցանկին եկաւ իր անունը կցելու պ. Իսահակեանը»: Նշում է, որ թեւ Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները «4-5 տարի է արդէն» տպագրվում են «Տարազում», «Արաքսում» և «Աղբիւրում», բայց «նրա մասին մի էջ բան չի տպած»: Ըստ էության, մինչև անդրանիկ գրքույկի հրատարակումը, քննադատի կարծիքով, նա «անյայտ աշխարհ էր» մեծ հասարակության համար (Աղբալեան, 1898: 839-840):

Այնուհետև Ն. Աղբալյանը քննելով թվարկում է Ավ. Իսահակյանի գրական տաղանդի առանձնահատկությունները: «Նախ՝ երեակայութիւնը», որը, ըստ նրա, «հարուստ է և փարթամ» ու «արդէն պ. Իսահակեանին մի առանձին տեղ է տալիս մեր նոր գրողների մէջ»: Էականն այն է, որ «Նա կարողանում է վառ ու պայծառ պատկերացնել տեսարանները»՝ ընտրելով ու ներկայացնելով «պատկերների խոշոր, էական, աչք զարնող մասերը»: Ն. Աղբալյանի տպավորությամբ, բանաստեղծի «գրչի շարժումը՝ վրձինի շարժում է...»: Ըստ այդմ՝ «Երգերն ու վերքերն» այդ կողմից մի հիանալի ցուցասրահ է, ուր աչք են ծակում բազմաթիւ գոյն ու երանգ ունեցող շլացուցիչ պատկերներ»: Եվ ապա՝ «Մեր բանաստեղծը բնութիւնից վերցնում է այն, ինչ վեհ է կամ գեղեցիկ, ինչ կենդանի է և աշխոյժ, ինչ դիպում է և հիացնում...»: «Պ. Իսահակեանի բանաստեղծութիւնները ոչ միայն հարուստ են պատկերներով, այլ և յաճախ իրանք պատկերներ են, որոնց մէջ կարելի է բովանդակութիւն դնել... Այս բոլորը իսկական բանաստեղծական շնորհքի նշաններ են, այս բոլորից երևում է, որ հեղինակը իսկական տաղանդի տէր է...», գրում է նա (Աղբալեան, 1898: 840-841):

Ն. Աղբալյանը պարզապէս հիացմունքով է խոսում Իսահակյանի «լեզւի հարստութեան, թարմութեան, ճկունութեան, ուժի ու թափի», համեմատությունների, «շքեղ դարձածների, պատկերաւոր ոճերի և արտայայտութիւնների» մասին, նշելով, որ դրանք «անթիւ են» (840): Տարբերակելով «ժողովրդական լեզուով, (...) նրա հոգով» գրելը «ժողովրդի լեզուով» գրելուց, քննադատը սահմանում է, թե «մէկը ցանկալի է մեր գրական լեզւի կենդանութեան համար, միւսը վնասակար է», քանզի՝ «նա բաժանում է ստեղծում. նա չի միացնում գաւառները,

այլ փակում է նրանց իրանց նեղ սահմաններում...»: Այդուհանդերձ, ըստ Ն. Աղբալյանի, դա, իհարկե, «չի փրկում պ. Իսահակեանի երկերի թովիչ ներգործութիւնից», որոնք «գեղեցիկ բաներ են, շատ սիրուն», դրանց մեջ կան երկու-երեք այնպիսի կտորներ, որոնք «հրաշալի բաներ են, որպէս գեղարւեստական երկեր»: Հատկապես մոր կարոտին նվիրված և նման գրվածքները, Աղբալյանի համոզմամբ, «Իսահակեանի գանձերն են, հարստութիւնն են...» (852): Իսկ ամբողջության մեջ գնահատականն այն է, որ «Այսպիսի լեզու մեր բանաստեղծներից ոչ ոք չունի և չի ունեցել»: Ընդ որում՝ ընդգծում է, որ խոսքը ոչ միայն «բարբառով գրած», այլև «աշխարհիկ գրական լեզուով» գրածներին է վերաբերում: Վերջապես՝ պատկերավոր արտահայտությամբ բանաձևում է, թե «Մեր լեզուն մի զէնք է հեղինակի ձեռքին, որ նա կարողանում է վարժ ու թեթև գործ ածել», իսկ ամենագլխավորն այն է, որ նա «թափանցել է մեր լեզուի **ոգու** (ընդգծ.՝ Ն. Ա) ներսը»: «Մի խոսքով,- եզրափակում է քննադատը,- այս լեզուն մի չտեսնւած լեզու է մեր գրականութեան մէջ», այն աստիճան, որ «մարդու աչքը շլանում է մայրենի լեզվի այդ հարստութիւնից...» (Աղբալեան, 1898: 840-842):

«Երգեր ու վէրքեր»-ի արժանիքների թվում Ն. Աղբալյանը նշում է նաև ձևի ու բովանդակության ներդաշնակությունը, բովանդակության ժողովրդայնությունը: Ըստ նրա՝ Իսահակյանը մի բանաստեղծ է, որ «ժողովրդի հետ է երգում կամ ժողովրդի սրտից է խօսում», նրա «ձայնը խրոխտ է և ազդեցիկ, ցաւը խորն է և համակող», ահա թե ինչու, «նրան շրջապատող համակրողների թիւը ստաւար է, հազարներ են՝ ցրած մեր երկրի այս ու այն խորշում, այս ու այն խրճիթի կամ դաշտի մէջ»: Այդուհանդերձ, նկատում է Աղբալյանը, երբ բանաստեղծը «հեռանում է, վերանում դէպի իր “հեռու ափերը”», մնում է միայնակ, «զգացմունքները անորոշ են դառնում ու ցուրտ, մտքերը մթնում են ու խառնում իրար» և «այն տեղերը ոչ մի մահկանացու չի կարող նրան հետևել, նա մենակ է իր «վէրքերի» հետ, անընկեր...» (Աղբալեան, 1898: 843-844):

Այդ ամենը ապացուցելու համար Ն. Աղբալյանը փորձում է ուրվագծել գրքույկի մեջ դրված «բանաստեղծի հոգին», որը նրա հավաստմամբ, հարուստ է, բազմակողմանի, իր բառով՝ «բնութոյն»:

Բարդ մի կառույց՝ «ծիւնապատ լեռան նման, որի ստորոտները, փեշերը լայն փռած՝ խրած են իրական կեանքի մէջ...»: Ուրեմն և՛ Աղբայանի կարծիքով, Իսահակյանի աշխարհայացքը հենց «բանաստեղծի ինքնօրինակ հոգու պտուղն է», որը տարբերվում է սովորական մարդկանց հոգեկան աշխարհից՝ կազմելով, մի տեսակ, «նրանց հոգեկան աշխարհների սինթեզը» (Աղբալեան, 1898: 845): Քննադատը նկատում է նաև, որ գրքույկի քերթվածներում «Ծանր ու տանջող, նոյն իսկ սարսափեցնող է մահուան հարցը. անհատի, սեփական ես-ի ոչնչանալու խնդիրը», որ «անլուծելի մի հանելուկ է, որի հետ պիտի հաշտուել ու դառնալ իրական կեանքին...» (Աղբալեան, 1898: 849): Եվ, ի վերջո, եզրակացնում է Աղբայանը, «Սէրն է այն լայն ծառայունեցող և բանաստեղծի սրտում մեծ տեղ բռնող զգացմունքը, որ նրա գրչից շատ երգ է խլել»: Քանզի՝ «Մինչև անգամ նա այդ զգացմունքը միակն է համարում. երբ կտրատում են նրա սրտի լարերը՝ միայն մէկն է անվնաս մնում.

Մենակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորերում,
Մենակ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամեն ծալքերում» (850):

Սակայն այստեղ էլ ամեն բան դյուրին չէ. բանաստեղծը «ջերմաջերմ խնդրում է «նազանի-նազելուց» սէր, պատրաստ է իր «հոգին» տալ նրան, բայց Շուշանները շատ էլ սիրով չեն» նրա հետ, որից նրա էությունը լցվում է ցավերով ու «իրական վերքերով», հարուցելով մինչև անգամ «մահուան ցանկութիւն ու կորչելու վճռականութիւն...»: Եվ «միակ մխիթարութիւնը» բանաստեղծը որոնում ու գտնում է ամենազոր բնության մէջ. այստեղ է «մի կարեկից սիրտ գտնում, մի համազգացող. (...) կարծէք նրա ներքինը, աներևոյթ թելերով կապւած է բնութեան հետ. և այդ կապը նա լաւ է արտայայտում» (Աղբալեան, 1898: 850-851):

Ամփոփելով վերլուծության արդյունքները՝ Ն. Աղբայանն արձանագրում է, որ «Պ. Իսահակեանը, որպէս **անհատական** բանաստեղծ արժէք ունի անկասկած», սակայն նրա արժանիքը շատ ավելի մեծ է՝ որպէս «**ժողովրդական** բանաստեղծ» և «այս կողմից է նա մեզ թէ գրաւում և թէ մեր մտածմունքի ու յոյսերի առարկան դառնում:

Նրա տաղանդի սուր-սուր և տարօրինակ կողմերը մեզ համար հետաքրքրական են, բայց թանկագին չեն...» (ընդգծումները՝ Ն. Ա): Եվ ապա՝ «Նա դեռ սկսնակ է համարեա, քիչ բան է գրել, բայց գրածների մէջ ոչ միայն լաւ բաներ, այլ և գոհարներ կան. նա ունի վառ երևակայութիւն, յարատև ոգևորութիւն, հարուստ լեզու և փորձած գրիչ»: Ինչ վերաբերում է սկսնակ բանաստեղծի ստեղծագործական հեռանկարին, ապա քննադատը դա «ամենահետաքրքրական հարցն» է համարում՝ համենայն դեպս զգուշավոր լավատեսությամբ: Ընդգծելով Իսահակյանի՝ իր արտահայտությամբ՝ «հոգու շրջման կէտերը՝ մէկը ժողովրդի մէջ, միւսը վերացականութեան սառոյցներում...», որոնցից առաջինով, ըստ էության, կապված է երկրի հետ, իսկ մյուսով՝ «հեռու ավերի հետ», նա հռետորական հարց է տալիս՝ «Ո՞րտեղից է սկսել և ո՞ր է գնում. միթէ դէպի սառն ու մեռած բարձունքները...»: Ու միանգամից էլ ավելացնում՝ «Չենք ուզում հավատալ...» (Աղբալեան, 1898: 855):

Ավ. Իսահակյանի հետ Ն. Աղբալյանը ծանոթացել ու մտերմացել էր Հովհ. Թումանյանի հիմնած Վերնատան շրջանում (1899-1908 թթ.), սերտ կապ պահպանել նաև նամակագրության միջոցով: 1902 թ. գրած վերոհիշյալ նամակում ոգևորել-խրախուսել է երիտասարդ բանաստեղծին դեպի նոր բարձունքներ՝ միաժամանակ բացահայտելով նաև հանճարի իր ըմբռնումը. «Դու ինչ բանի ես, մի քնի. հանճարը համբերություն է և աշխատանք ասաց մեկը – համաձայն չեմ: Բայց առանց այդ երկուսի հանճար չի լինում. ուրեմն մտածիր, որ կարող ենք կորցնել երկինքը մեր աչքերից, բարձրացիր և բարձրացրու. որովհետև կարող ես...» (Աղբալյան, 2003: 31): Մեկ տարի անց մեկ այլ նամակում (1903, դեկտ. 6, Ս–Պետերբուրգ) շարունակել է իր դիտումներն ու խորհուրդները. «Դու ունես ինքնուրույն հոգի և տրամադրություն, բայց մեծ արվեստագետներին լավ ուսումնասիրի, ոչ թե նրանց մտքերի համար, որոնք նույնպես կարող են օգուտ բերել՝ վառելով քո հոգու հրանյութը, այլ նրանց արտահայտելու արվեստն ուսումնասիրելու համար, հատկապես Պուշկին և Գյոթե. այս վարպետներն աննման են...»: Արտահայտելով իր տեսակետը գրական արվեստի կատարելության վերաբերյալ՝ ընդգծում է «բնուրույն ոգու» և «հարուստ ոգու» տարբերության իր ըմբռնումը, ըստ որի՝ «մեծ բան

է, երբ բնություն ոգին գտնում է հնար բնությունն արտահայտելու, բայց ավելի մեծ բան է, երբ հարուստ ոգին կարողանում է խնայող ձևերի մեջ երևալ: Գեղարվեստի գաղտնիքը խնայողության մեջ է: (...) Հոգու և աչքի երկինքը բառի մեջ սեղմել, ըստ կարելույն քիչ բառի և ներդաշնակ ու համաչափ բառերի մեջ – ահա ինչին պիտի ձգտին ամենքը, որոնք գրում են»: Եվ ապա հաջորդում է գոտեպնդիչ-խրախուսիչ խոսքը՝ «դու գրող ես – այս մի մոռանա»: Նույն նամակում Ն. Աղբալյանը շարունակում է պնդել գրողի անընդհատ ինքնակատարելագործման պահանջի անհրաժեշտությունը: «Գրողը, որ դադարեց հառաջադիմելուց – նրա մահը մոտ է արդեն, - գրում է նա: - Գրողը մարգարե է, իմաստուն, խորհող. նա կյանքի հետ գնալով պիտի լայնանա ու խորանա և ձեռք բերի ընդունակություն իր ներսը դուրս հանելու...» (Աղբալյան, 2003: 36-37):

Իսկ ի՞նչ էր հասկանում Ն. Աղբալյանն ընդհանրապես՝ ստեղծագործող անհատի առաջադիմություն ասելով: 1903 թ. մարտին Ս. Պետերբուրգից Հովհ. Թումանյանին գրած նամակում նա իրեն յուրահատուկ պատկերավոր համեմատության լեզվով էր ներկայացնում իր տեսակետը, որը հանգում է ազգային ու համամարդկային ներքին օրգանական կապերի անհրաժեշտության ըմբռնմանը: «Ես Ֆաուստի մեջ կարող եմ մտնել այնպես, ինչպես գնում եմ ամառանոց, ես Համլետը կարդում եմ, երբ ուզում եմ **իմ տանից** (ընդգծ.՝ Ն. Ա.), հայ մթնոլորտից զբոսանքի դուրս գալ, բարձր սարեր բարձրանալ, զով անտառներում շրջել, (...) իմ ազգի իմաստասերներից պիտի սկսեմ Կանտին հասկանալու համար, իմ ազգի գիտակցությունից համաշխարհային գիտակցությունը ըմբռնելու համար...»: Այդ ճանապարհը, ըստ Ն. Աղբալյանի, անցնում է նաև ազգային դարավոր մշակույթի, արվեստի ու գրականության նշանավոր կոթողների, ավանդույթների ստեղծագործական յուրացման միջով: Նրա համոզմամբ՝ «... հայը պիտի հայ մնա և ցույց տա իրան աշխարհին ոչ իբրև եվրոպացի, այլ իբրև հայ, նա պիտի իր **հոգու ոգին** (ընդծումը մերն է. - Պ. Դ.) սնուցանի Նարեկացիով ու միջնադարյան երգերով և կլանելով այն, ինչ տվել է ամբողջ մարդկությունը ճշմարտության, գեղեցկության, բարի աշխարհում, ասի աշխարհին, թե ինչպես է ինքը հասկանում այն երրորդությունը» (Աղբալյան, 2003: 35):

1900-ական թվականների սկզբից Ավ. Իսահակյանը ևս մշտական նամակագրական կապի մեջ է եղել Հովհ. Թումանյանի հետ, հետաքրքրվել Վերնատան գործունեության, նրա անդամների՝ նաև Նիկոլ Աղբալյանի մասին, երբեմն նաև տեղեկություններ հաղորդել վերջինիս վերաբերյալ:³ 1904-ի փետրվարի նամակում գրում է, թե Աղբալյանը «Բանբերի»⁴ մեջ իմ մասին բան է գրել՝ մի երկու տող...» (Իսահակյան, 2021: 86): Խոսքը Ավ. Իսահակյանի՝ Բաքվում 1903-ին լույս տեսած «Բանաստեղծություններ» երկրորդ ժողովածուի վերաբերյալ պետերբուրգյան այդ հանդեսում Ն. Աղբալյանի գրախոսականի մասին էր (Աղբալեան, 1904:189-198): «Երգ ու վերջից յետոյ» խորագիրը կրող այդ գրության մեջ նախ անդրադառնալով ժողովածուի ներքին ու արտաքին ձևավորմանը, որակին՝ Ն. Աղբալյանը նշում է, թե «դժբախտաբար» այն «շատ անճաշակ է, մինչև իսկ կոպիտ»: Եվ դա բացատրում է նրանով, որ այնտեղ «ահագին գլխատառեր, երագուն ու յուզիչ բանաստեղծությունների հետ ոչ մի կապ չունեցող (...) տգեղ զարդեակներ ու բազմատեսակ տառեր ծանրաբեռնում են գրքի էջերը և ընթերցողի աչքը»: Այս դիտողությունը, իհարկե, պատահական չէր, քանի որ Ն. Աղբալյանը, օժտված լինելով նկարչական ծիրքով, մեծ նշանակություն էր տալիս որևէ գրվածքի գեղարվեստական պատշաճ ձևավորմանը⁵: «Սրտառուչ են Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքերի» երկրորդ հրատարակության (իմա՝ 1908 թ. – Պ. Դ.) համար գործադրած ջանքերը, - նշում է աղբալյանագետ Գառնիկ Անանյանը, - հրատարակողներ էր փնտրում, հաշվարկներ էր անում տպագրական ծախսերի վերաբերյալ, պայմանավորվում էր տպարանների հետ: Որքան գործվանք կա, ասենք, այս ցանկության մեջ. «Գրվածքդ եթե տպելու լինես, - գրում է Իսահակյանին, - մտադիր եմ գրչագրերից առած խորանարդագարդերով տպել...» (Անանյան, 1989: 61): Ընդ

³ Տե՛ս Հ. Թ.-ին գրած նամակները՝ 1900, 21 հոկտ., Ցյուրիխից, 1901, 12 սեպտ., Ղազարապատից, 1902, 4 հոկտ., Բաքվից, 1904, 23 փետր., Նոր Նախիջևանից, 1908, 20 հունիս, Ղազարապատից... (Իսահակյան, 2021: 49, 62, 69, 85-86, 159):

⁴ «Բանբեր գրականության եւ արւեստի» հանդես, Ս. Պետերբուրգ (1903-1904, Ա և Բ գրքեր):

⁵ Հայտնի է, որ նա սկզբնական շրջանում նաև նկարագարող է իր գրվածքները (տե՛ս Անանյան, 2002: 9):

որում՝ այդ խնդիրն ավելի լայն ու խոր ընդգրկում ուներ, քանի որ, ըստ նրա, «Գեղեցիկ հրատարակությունն ինքն արդեն մի կենսակիրթ գործօն է. որովհետև ճաշակի զարգացումը կապված է սրտի նրբացման հետ, որ բարոյականացնում է մարդուն» (Աղբալեան, 1904: 189):

Գրախոսության սկզբում՝ հավաստելով հանդերձ «Ա. Իսահակեանի տաղանդի նոր յատկություններն, որոնք երևում են այս գրքում», նշում է, թե իր նպատակը չէ դրանք «և ոչ էլ նրա գրութեան ձևերն ու երգերի գեղարվեստական արժէքը» քննելը: Ապա՝ հիշեցնելով Իսահակյանի նախորդ՝ «Երգեր ու վերքեր» ժողովածուի հիմնական բովանդակությունը, ըստ որի նրա «քնարը երկու լար ունէր, որոնք ամենից բարձր ու յաճախ էին հնչում նրա հոգու մէջ. երկուսն էլ զեղում էին կորուստ և հիասթափութիւն»՝ ընկեր-մարդկանցից և կին-արարածից, ընդգծում է, որ ուզում է պարզել և «ցոյց տալ այն ելքը, որով նա դուրս է գալիս իր յուսախաբ դրութիւնից»: Անհանգիստ որոնումներին ու թախծալի տրամադրություններին, գրում է նա, հաջորդում են «յոգնածութիւն, անտարբերութիւն, հոգու ցուրտ մոայլ: Սիրո կորուստի հետ ամայանում է աշխարհը նրա աչքին...»՝ «Ոգևորութեան մի հնչիւն չկայ.- // Չկայ մի թոյլ կայծ այն վառ հրդեհից. // ... Ես էլ չեմ ապրում...» (Աղբալեան, 1904: 190-191):

Այնուամենայնիվ, թվում է, դեռ ամեն բան կորած չէ: «Բայց մարդն ուզում է ապրել,- նկատում է Աղբալյանը,- և բանաստեղծը ելք է որոնում...»: Ելքի ուղիներն էլ խիստ սահմանափակ են՝ վրեժ, որը, սակայն, «անյարիր է բանաստեղծի նուրբ հոգուն և նրա տուած հանգիստը կասկածելի...» և կամ թափառում աշխարհով մեկ՝ «Թափառե՛լ, տեսնել նոր ավեր ու նոր մարդիկ, ընկնել բնութեան ծոցը...»: Սկզբում, թվում է, զուր է այդ ամենը, բայց... հանկարծ լույսը շողում է մութ թունելի ծայրում. «Եւ ահա վրա է հասնում իսկական բուժումը. այն միակ ճշմարիտ ելքը, որով կարելի է դուրս գալ ցաւերի մթին աշխարհից դէպի նոր կեանքի արևաշող հեռաստանը...»: Հանկարծ պարզվում է, որ «Բնութեան անդրաձայնելու, նրա հետ ապրելու ընդունակութիւնը այնպիսի կենսարար աղբիւր է, որ կարող է մեր կեանքի անապատը նեղ կանաչուտով կապել գոհունակութեան դրախտի հետ: Եւ ահա ծնունդ են առնում Իսահակեանի խորագոյն բանաստեղծութիւնները,- մենկաբանում է Աղբալյանը,- որոնք փոքր ինչ մութ

են՝ ինչպես ամեն խորութիւն, և կարօտ մեկնութեան» (Աղբալեան, 1904: 191-192): Շատերի միջից առանձնացնելով անսահման բնութ-
յան գրկում «հոգիս հալւեց վե՛հ լութեան մէջ» տողը՝ քննադատը
նշում է. «Ահա՛ մի կատարեալ անէացում, կենդանի մահացութիւն»,
ավելացնելով՝ «Այսպիսի մի ինքնամոռացութիւն մարդ կարող է գտնել
մէկ էլ սիրու մէջ» (Աղբալեան, 1904: 193): Անծայր ու խոր տիեզերքի
հետ նույնության զգացումը՝ «Հոգու այս տրամադրութիւնը անհունա-
պէս լայնացնում ու զօրացնում է մարդու,- գրում է նա:- Զգալ, որ տիե-
զերական ուժերի մի հանգրուան ես, որ Եսդ այսօր ինքնիշխան՝ վաղը
դատապարտւած ոչնչութեան, տիեզերական զօրութեանց կեդրոն է,
(...) որ դո՛ւ ծնունդ ես այդ Յաւերժականի և Անմահի, և զաւա՛կ այս
մեծ հօր – ի՞նչ անելի վետմ զգացում և վեհացնող տրամադրութիւն»
(Աղբալեան, 1904: 193):

Այս հարցում, սակայն, Իսահակյանի առաջին և երկրորդ ժողո-
վածուների միջև ընկած մի քանի տարիների ընթացքում, ակնհայտ է
Աղբալեանի հայացքների մեջ կատարված էվոլյուցիան: Եթե «Երգեր
ու վերքերի» գրախոսության մեջ՝ վկայակոչելով բանաստեղծի այն
տողերը, թե՛ «Տիեզերքի պերճ հիւսւածքն եմ, // Իմ մէջ երկինքն է
երգում...», նա բանաստեղծի անհատական էության՝ մյուսներից
առանձնացող հատկանիշներից մեկն էր համարում դեպի տիեզերա-
կան հեռուները վերանալու ձգտումը՝ գտնելով, որ նրա երգերն այդ
նույն «մեծ տիեզերքի հսկայ վերքերի ցաւն ու կսկիծն են» և տարա-
կուսանքով հարցնում էր՝ «այսպէս ո՞վ է մտածում ու զգում»: Դեռ
ավելին՝ հաստատում էր, թե «Այս աշխարհայեացքի բեկորները ուղ-
ղակի հակառակ են գիտութեան, փորձին, տրամաբանութեան,
առողջ խելքին», դրանք նույնիսկ «մտային ժանտախտի բացիւներ» էր
համարում, որոնք «նորութեան ու գեղեցկի դիմակի տակ գալիս են
պղտորելու առողջ մարդու առողջ գիտակցութիւնը...» (Աղբալեան,
1898: 846), ապա այստեղ արդեն հաստատում է ճիշտ հակառակը՝
«Տասը տարւա թափառումներից հետո՝ վշտաբեկ ու դարդոտ, կորց-
րած բոլոր փարոսները, բանաստեղծը նորից մտնում է այդ տրամադ-
րութեան դռներից, որտեղից դուրս էր եկել սիրելու և սիրուելու, բարիք
գործելու»: «Այդ այն յայտնութիւնն է,- արդեն համոզված հաստատում
է Աղբալեանը,- որ ունեցել են շատ մահկանացուներ, որոնք սիրել են

լուութեան մէջ ականջ դնել իրանց ներսի և դրսի Աստծուն, որ նոյն է և մի.

... Եւ ես զգում եմ.- ահա՛ տեսնում եմ

Ողջ տիեզերքը մի մեծ անհուն զանգ

Եւ հոգիս նրա լեզուակը վսեմ...»:

«Կապը, կոչումը գտնուած է: Ի՞նչ վեհ և բովանդակալից ըմբռնում,- մեկնաբանում է քննադատը,- տիեզերքը մի զանգ է ահագին, և մարդը լեզու նրա մէջ... Եթէ լեզուակ, ապա՝ ոչ թէ լռելու, այլ հնչելու համար. մարդու հետախոյզ հոգին պէտք է ծայներ հանի տիեզերական զանգի պատերին դիպչելով և ականջ դնի նրանց ղողանջին.

Եւ հրաշքներով, վեհ լուութեան մէջ,

Տիեզերքն անչափ՝ խո՛ր ղողանջում է

Երգն անհունութեան, և գեղեցկութեան» (Աղբալեան, 1904: 194):

«Ի՞նչ անսահման խորութիւն և գեղեցկութիւն,- ոչ պակաս ոգեշնչմամբ բացականչում է Ն. Աղբալեանը:- Մոտեցի՛ր դո՛ւ, ստորաքարշ որդի մարդկային, մտի՛ր այս հաւիտենական ներդաշնակութեան ոլորտը, (...) հրաշք չե՛ս դու ինքդ ու քո հոգին, որ անհունութեան խաւարից դուրս ես գալիս, որպէս ծաղիկը երկրի անլոյս ծոցից, և կայծակի լուսով տեսնում այս աշխարհին ու անյայտանում նոյն անհունութեան մէջ...»:

Բայց ամեն բան դրանով ևս չի ավարտվում, ընդհակառակը՝ «յայտնութիւնն աւելի խորանում է.

Եւ տիեզերքը խոր ղողանջում է,

Եւ իմ հոգումն է, իմ Ոգին է այն,

Որ ղողանջում է – ես մարգարէ եմ...

Հաւատի անկման և յուսախաբութեան րոպէներին թում է թէ կեանքը անիմաստ մի խաղ է, «զաւեշտ ու հեշտանք». բայց այստեղ, երբ գտնւել է այն անխզելի կապը, որ կապում է մարդուն և տիեզերքն իրար հետ, կեանքն էլ ստանում է վեհ իմաստ»: Նիկոլ Աղբալեան քննադատ-գրականագետի համոզմամբ՝ դա մի փրկարար ճանապարհ է, որ մարդուն մինչև երկնքի անհունները տանելուց հետո նոր որակով իջեցնում է երկիր, ուր «իբր հոգու ղողանջով «արթնացած»

բանաստեղծ-մարգարէն ամբոխ է մտնում «ազատութեան, վեհութեան երգով»... (Աղբալեան, 1904: 195):

«Այս ճանապարհով է դուրս գալիս բանաստեղծը իր երգ ու վերքերի վշտերից դէպի մի նոր, լայնածաւալ, սուրբ ու լուսաշող կեանք», ամփոփելով իր վերլուծությունների արդյունքները, արձանագրում է Ն. Աղբալեանը: Եվ այդ ելքը, ըստ նրա, «շատ բնորոշ է» ոչ միայն Ավետիք Իսահակյանի, այլև ընդհանրապես «հայ գրականութեան ու կեանքի համար և մխիթարութիւն է բոլոր տառապող ոգիներին...»: «Բանաստեղծը հասունանում է,- իր խոսքը եզրափակում է քննադատը,- կեանքը խոհուն հայեացքով դիտում, իմաստասիրում և հաստատ քայլերով բարձրանում է ազգային պարծանքների բնակավայրը»... (Աղբալեան, 1904: 198):

Ավետիք Իսահակյանի անհատականության և ստեղծագործության առավել ամբողջական գնահատականը Ն. Աղբալեանը տվել է 1945 թվականին՝ Վարպետի ծննդյան 70-ամյակի առթիվ արտասանած իր խոսքում: «Ա. Իսահակյան ծանոթ է ամենքին, ամենքը կարդացած են անոր երգերը, սիրած են և երգած: Եվ այսպես եղած է առաջին օրեն, երբ 1898 թ. լույս տեսավ իր փոքրիկ գրքույկը՝ «Երգեր և վերքեր», արձանագրում է նա՝ ինչպես արդեն նշել ենք, հիշեցնելով, որ հենց ինքն է եղել բանաստեղծի առաջին հայտնագործող քննադատը: Պատասխանելով «Ո՞րն է բանաստեղծի կոչումը» հարցին՝ Ն. Աղբալեանը հաստատում է, թե հենց «Իր անվան մեջ է իր կոչումը – բանաստեղծ, այսինքն՝ «բան ստեղծող», որ կնշանակե խոսք և միտք ստեղծող: Որո՞ւ կամ ինչի՞ համար – իր ներքին աշխարհին արտահայտելու համար» (Աղբալեան, 2005: 80): Այնուհետև փորձելով բնորոշել Ավետիք Իսահակյանի՝ իր արտահայտությամբ՝ «ոգեկան ընթաճիրը», հետևյալ պատկերն է ներկայացնում. «Նախ մաքուր և երազուն պատանի, հետո սրտաբեկ հոգի, այնուհետև սիրասթափ և հիասթափ մարդ մը, որ ելքեր կորոնե հանրային շարժումներուն և զգայական սիրո մեջ. ապա նկուն կյանք մը և դառնացած սիրտ ու մտայնություն...»: Սակայն կարևոր է այն շեշտադրումը, որ անում է նա վերջին արձանագրման կապակցությամբ. «Բայց տառապանքն իր սիրտն դաժան չէ դարձած,- գրում է Ն. Աղբալեանը,- և ոչ փոխված է անոր խորքը, որ բարի է, բնաբույս: Եվ ան մեզ և իր զավակին կկտա-

կե. «Ատելու չափ սիրիր մարդկանց, բայց լավություն միշտ արա»: Կանխելով հնարավոր կասկածներն ու ենթադրությունները, թե արդյո՞ք «բացառիկ է հոգեկան կյանքի այն ընթացիկը, որով անցած է Ա. Իսահակյան», քննադատը պատասխանում է՝ «Ոչ», քանզի՝ «Այդ ընթացիկն է բոլոր մաքուր և երազուն հոգիների» (Աղբալյան, 2005: 79):

Ասվածի առնչությամբ միանգամայն ճշմարիտ է Գ. Անանյանի այն եզրահանգումը, ըստ որի՝ «Աղբալյանն օժտված էր առաջին իսկ ստեղծագործությամբ գրողի տաղանդը ճանաչելու և զարգացման ուղղությունը գուշակելու զարմանալի ձիրքով» (Անանյան, 2002: 75): Եվ իրոք, այդ են ապացուցում ոչ միայն Ավ. Իսահակյանի, այլև Լ. Շանթի, Վ. Տերյանի, Ստ. Զորյանի, Ե. Չարենցի գրական ապագայի նրա գուշակությունները: Եվ դարձյալ՝ «Եթե գրողի մեծությունը չափվում է նրանով, թե որքան խորն ու ճշմարտացի է արտացոլում իրականությունը, ընդգծում է նա,- քննադատի կարողության չափանիշն էլ այն է, թե ժամանակին որքանով է ճիշտ ընկալել ընթացիկ գրականության զարգացման միտումները, այդ միտումները կրող արվեստագետ անհատներին բնորոշ գրական երևույթները» (Անանյան, 2002: 104):

Հայտնի է, որ Ն. Աղբալյանի տեսական-գրականագիտական հայացքներն ու ըմբռնումները ձևավորվել էին հիմնականում Օգյուստ Կոնտի պոզիտիվիստական իմաստասիրության, Հիպոլիտ Տենի կուլտուր-պատմական ուսմունքի, գրականության պատմաբան, ազգագրագետ Ալեքսանդր Պիպինի տեսակետների, ինչպես նաև ռուսական դեմոկրատական քննադատության (Բելինսկի, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով), արվեստի ժողովրդայնության սկզբունքների ազդեցությամբ: Ահա թե ինչու, հարցի պատասխանը, թե «ո՞ր դեպքում է բանաստեղծի հոգեմտավոր աշխարհը համապատասխանում բարձր արվեստի, ժողովրդի կողմից ընդունման և սիրո արժանանալու չափանիշներին», միանգամայն հստակ է նրա համար. «... երբ բանաստեղծի ներքին աշխարհը **տիպար ապրումներ** ունի, այսինքն կ'ապրի նույն սերն ու վիշտը, կսկիծն ու մորմոքը, սրտաբեկումն ու սիրասթափումը, որ կապրինք նաև մենք, այն ժամանակ իր ստեղծած «բանը» կխոսի նաև մեր սրտին և մեր սրտեն: Մենք **կհամզգանք բանաստեղծին** (ընդգծումները մերն են – Պ. Դ.): Դա, ըստ էության, գրականության տեսության կողմից ամրագրված գեղարվեստական իրականության,

մասնավորապես գրական կերպարների **տիպականացման** դրույթի հաստատումն էր: Ըստ Զրբաշյան-Մախչանյանի՝ «Ընդհանուրը, էականը արվեստի մեջ միշտ արտահայտվում է կոնկրետ, անհատական բնույթ ունեցող կերպարի միջոցով: Տիպականը միշտ միասնությունն է պատկերվող երևույթի անհատականացման և ընդհանրացման...» (Զրբաշյան, Մախչանյան, 1972: 328): Բանն այն է, որ, ինչպես նշում է Աղբալյանը, «Մեր ապրումները նման են, բայց նման չեն մեր կարողությունները: Ան բանաստեղծ է և տաղանդ ունի, իսկ մենք սովորական մարդիկ ենք: Ան ավելի պայծառ կզգա, քան մենք և ավելի գեղեցիկ կխոսի իր ապրումի մասին»: Ըստ այդմ՝ ընթերցելով տաղանդավոր գրողի՝ տվյալ դեպքում Ավ. Իսահակյանի գործերը, մարդիկ «...գիտեն, որ միևնույն չեն տառապանքի մեջ, որ ազգին նշանավոր բանաստեղծը ունին իբր ցավընկեր և թարգման»: Ուրեմն և, այս ամենից հետո, ըստ գրականագետի, այլևս հասկանալի է, թե «ինչո՞ւ ան սիրված է և իր երգերը ամենի բերանն են»: Եվ հաջորդում է հերթական պատկերավոր ընդհանրացում–բնորոշումը. «Այսպես են ամենքը, որ ժողովրդի սրտեն ջուր կխմեն» (Աղբալյան, 2005: 80):

Նշված արձանագրումների համատեքստում, իհարկե, կարևոր է նաև հարցը, թե, այդուհանդերձ, բանաստեղծի ստեղծած ինքնատիպ երկերում ի՞նչն է առավել գրավիչ, մոտ ու հարազատ ժողովրդի սրտին, մտքին և հոգուն: Ն. Աղբալյանը թվարկում է մի քանի հանգամանք: Նախ այն, որ «Ավ. Իսահակյան անարվեստ հեղինակ է, եթե արվեստ ասելով հասկանալ ուզեն գործի հղկումը»: Եվ ապա՝ «Ոչ մեկ ճիգ կնկատվի իր երգերում մեջ և ոչ մեկ հղկում: «Սրտաբուխ» բառը կարծեք հորինված է անոր երգերը որակելու համար»: Իսկ ո՞րն է դրա հիմքը, բուն պատճառը. Ն. Աղբալյանի համոզմամբ՝ նախ և առաջ այն, որ ծնված լինելով «աշուղների աշխարհ» Շիրակում, բանաստեղծի ականջը դեռ վաղ տարիքից լցված է եղել «ռամկի սրտաբուխ երգերով և ան ստեղծած է անոնց արվեստով, որ համարած է միակն և իսկականը»: Հարազատ մնալով ժողովրդական արվեստի խորքային տարերքին ու բովանդակությանը՝ երբեք չի հաշտվել իրական կյանքի հետ, քանզի «երազն իր աչքին միակ իրավացին է, իսկ իրականը բիրտ և անիրավ. ուստի միշտ վեր է կյանքեն և ատեցող առօրյան»: Սակայն դա ամենևին չի նշանակում, թե բանաստեղծը

Ժխտում է կյանքը, իրականությունը: Պարզապես նրա հոգու ձգտումն ու երազը շատ ավելի մասշտաբային է, անչափելի ու խոր: Ն. Աղբալյանի բնորոշմամբ՝ «... անոր մեջ միշտ կենդանի ապրում մըն է **համազգացումը տիեզերական կյանքին** (ընդգծումը մերն է – Պ. Դ.)»: Ավետիք Իսահակյան բանաստեղծը, ըստ քննադատի, իհարկե, իմաստասեր–մտածողը չէ, բայց «խոկացողն է մեր մեջ: Տիեզերքը լայնորեն կարծագանքե անոր հոգիին մեջ, և այդ մտերմության մեջ միշտ կթարմանա անոր կորովը և սիրտը ուժ կստանա տաղտկալի առօրյան ապրելու» (Աղբալյան, 2005: 80–81): «Պողպատը քիչ է իր բնույթին մեջ և կամքի պրկումն անբավարար», հայտարարում է Աղբալյանը: Այս իմաստով համեմատություն անցկացնելով երկու ինքնատիպ բանաստեղծների՝ Իսահակյանի ու Չարենցի միջև («Իր մարտական երգերուն միմիայն Ե. Չարենցը մրցորդ երևաց»), ընդգծում է, թե պատճառն այն է, որ վերջինս «հեղափոխության համակիր չէր միայն, այլև մարտիկ էր միանգամայն», բայցևայնպես, Իսահակյանի մարտական տրամադրությունները ևս «թողած են անկորնչելի հետք մը», ինչի ապացույցն է «Ուստա Կարոն – որ ինքն է այլափոխ» (Աղբալյան, 2005: 79): Ապա վերադառնալով Իսահակյանի հոգու տիեզերական թափանցումներին և փորձելով բացահայտել նրա ստեղծագործության ժողովրդականության ակունքները՝ Աղբալյանը նշում է, որ «Այս լայն համազգացումն է, որ մեր բանաստեղծին կդարձնե համակիր և կարեկից մարդկային թշվառության, խոնարհ խավերու տառապանքին և ազատության խոյանքներին»: Ընդ որում, ըստ նրա, խորքային այդ զգացումը բանաստեղծի մեջ պայմանավորված չէր միայն դրսից (մասնավորապես՝ Նիցշեի հայացքներից) եկող ազդեցություններով: Ն. Աղբալյանը համոզված էր, որ այդ ապրումը բանաստեղծի մեջ ծնունդ էր նրա «բնածին համազգայության՝ բնության կյանքին»՝ ընդգծելով, որ «Հոյակապ են և անկորնչելի այն երգերը, որ ծնունդ են այս ապրումի: Բանաստեղծին կթվի, թե տիեզերքը մի անհուն զանգ է, և իր Հոգին անոր լեզվակը» (Աղբալյան, 2005: 81):

Ամբողջ ասվածից, բնականաբար, հետևում էր նաև հայոց գրականության զարգացման շղթայում բանաստեղծի անհատականության և ստեղծագործության տեղի ու դերի ճշգրտման խնդիրը: Դեռևս 1908-ին՝ Ատոմ Յարճանյանի «Հայորդիներ» շարքի կապակ-

ցությամբ, Ն. Աղբալյանը հավաստում էր, **Իսահակյանական դպրոցի** գոյության փաստը. «Ա. Իսահակեանի նման նա էլ ստեղծել է մի դպրոց», գրում է նա, որով «արևմուտքի սկսնակ հայ բանաստեղծները նախ նրա շաղով են գնում, ապա ընտրում իրենց ուղին»: Եվ այդ տեսակետը հիմնավորում էր նրանով, որ, ըստ էության, նրանք երկուսն էլ «գորեղ անհատականություններ» են, «բնություն ոգիներ» (Ն. Ա., 1908, N 2): Ալ. Ծատուրյանի մահվան կապակցությամբ 1917 թ. գրած խոսքում նշում է գրական երկու զուգահեռ շարքերի առկայության իրողությունը՝ Ա. Շահագիզ-Հովհ. Հովհաննիսյան-Ալ. Ծատուրյան-Վ. Տերյան և Խ. Աբովյան-Հովհ. Թումանյան-Ավ. Իսահակյան: Ընդ որում, մեկնաբանելով Իսահակյան-Ծատուրյան փոխհարաբերության էությունը, ներկայացնում է հետևյալ պատկերավոր ձևակերպմամբ. «Ծագում է Ա. Իսահակեանի ինքնատիպ տաղանդը և իր շողերով տաս տարի ներկում է հայոց բանաստեղծությունը,- այդ շողերով գունավորվում է Ա. Ծատուրյանը» (Ն.Ա.,1917, N 72): Եվ ապա՝ Հովհ. Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակի կապակցությամբ՝ արձանագրում է. «Յ. Յովհաննիսեանը պատկանում է Շահագիզի գրական դպրոցին, իր լեզվով և տաղաչափությամբ հարում է նրան: (...) Հետևելով Գամառ-Քաթիպային՝ հնչեցրեց ժողովրդական մոտիվներ, որ յետոյ այնքան ցայտուն զարգացման պիտի հասնեին Յ. Թումանեանի և Ա. Իսահակեանի երկերում» (Ն. Ա., 1913, N 90): Իսկ առավել ամբողջական գնահատականն այն էր, որ «Գրականության պատմության մեջ որոշ և հաստատուն է Ա. Իսահակյանի տեղը: Ան կուգա Հ. Թումանյանեն հետո և ձեռք կմեկնի Վ. Տերյանին: Իր անունն ու գործը անկորնչելի ստացվածքն են Հայոց գրականության» (Աղբալյան, 2005):

Եզրակացություն

1. Գրական քննադատ և գրականության տեսաբան, հայտնի ազգային, պետական, գրական-մշակութային գործիչ Նիկոլ Աղբալյանն աչքի ընկնող տեղ է գրավում XIX դարավերջի և XX դարակեսի հայոց պատմության զարգացումների մեջ:

2. Ն. Աղբալյանի գրական-գիտական հետաքրքրությունների համատեքստում առանձնակի կարևորվել է հայոց գրականության պատմության ստեղծման խնդիրը:

3. Ն. Աղբալյանն ակտիվորեն ներգրավվել է հայոց գրականության նոր շրջանի գրողների, այդ թվում՝ Ավ. Իսահակյանի, երկերի վերլուծությանն ու գնահատությանը:

4. Ավ. Իսահակյանի առաջին՝ «Երգեր ու վերքեր» ժողովածուի գրախոսությունից սկսած՝ Ն. Աղբալյանը մշտապես բարձր է գնահատել բանաստեղծի տաղանդը՝ «որոշ և հաստատուն» համարելով նրա տեղը հայոց գրականության պատմության մեջ՝ Հովհ. Թումանյանի և Վ. Տերյանի միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղբալյան Ն.**, Նամակներ, պաշտոնական գրություններ (Կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները հեղինակեց Գ. Անանյանը), Եր., «Հայաստան» հրատ., 2003, 275 էջ:
2. **Աղբալյան Ն.**, Ընտրանի (Կազմեց և ծանոթագրեց Գ. Անանյանը), Եր., ԵՊՀ հրատ., 2005, 362 էջ:
3. **Անանյան Գ.**, Նիկոլ Աղբալյան (Կյանքը և գրական-հրապարակախոսական գործունեությունը), Եր., ԵՊՀ հրատ., 2002, 313 էջ:
4. **Իսահակյան Ավ.**, Երգեր ու վերքեր, Ալեքսանդրապոլ, 1898, 64 էջ:
5. **Իսահակյան Ավ.**, Երգեր ու վերքեր, Թիֆլիս, 1908, 288 էջ:
6. **Իսահակյան Ավ.**, Բանաստեղծություններ, Բաքու, 1903, 136 էջ:
7. **Իսահակյան Ավ.**, ԵԼԺ, հ. XIII, Եր., «Էդիթ պրինտ» հրատ., 2020, 720 էջ:
8. **Իսահակյան Ավ.**, ԵԼԺ, հ. XIV, Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 2021, 1130 էջ:
9. **Մովսես Խորենացի**, Պատմութիւն հայոց, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 420 էջ:
10. **Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.**, Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., 1972, 328 էջ:

Մամուլ

1. **Անանյան Գ.**, Ն. Աղբալյանի նամակները Ավ. Իսահակյանին // Եր., «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, N 2, էջ 57-64:

2. **Ն. Ա.**, Հայ տառապանքի երգիչը // «Զանգակ» օրաթերթ, Թիֆլիս, 1908, N 2:
3. **Ն. Ա.**, Յ. Յովհաննիսեան // «Հորիզոն», Թիֆլիս, 1913, N 90:
4. **Ն. Ա.**, Ալ. Ծատուրեան, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1917, N 72:
5. **Աղբալեան Ն.**, Երգ ու վերք, «Մուրճ», Թիֆլիս, 1898, N 6, էջ 839-855:
6. **Աղբալեան Ն.**, Երգ ու վերք ից յետո, «Բանբեր գրականութեան եւ արուեստի», Ս-Պետ., 1904, Բ գիրք, էջ 189-198:

REFERENCES

1. **Ağbalyan N.**, Namakner, paštonakan growt'yownner (Kazmec', araġabanë ew çanot'agrowt'yownnerë heġinakec' G. Ananyanë), Er., «Hayastan» hrat, 2003, 275 էջ:
2. **Ağbalyan N.**, Ėntrani (Kazmec' ew çanot'agrec' G. Ananyanë), Er., EPH hrat., 2005,- 362 էջ:
3. **Ananyan G.**, Nikol Ağbalyan (Kyank'ë ew grakan–hraparaxosakan gorçowneowt'yownë), Er., EPH hrat., 2002, 313 էջ:
4. **Isahakyan Av.**, Erger ow vërk'er, Alek' sandrapol, 1898, 64 էջ:
5. **Isahakyan Av.**, Erger ow vërk'er, T' iflis, 1908, 288 էջ:
6. **Isahakyan Av.**, Banasteġcowt' iwnner, Bak' ow, 1903, 136 էջ:
7. **Isahakyan Av.**, ELŽ, h. XIII, Er., «Ėdit' print» hrat., 2020, 720 էջ:
8. **Isahakyan Av.**, ELŽ, h. XIV, Erewan, «Ėdit' print» hrat., 2021, 1130 էջ:
9. **Movses Xorenac' i**, Patmowt' iwn hayoc', Er., «Hayastan» hrat, 1968, 420 էջ:
10. **J̣rbašyan Ėd., Maxčanyan H.**, Grakanagitakan bařaran, Er., «Iowys» hrat., 1972,- 328 էջ

Mamul

1. **Ananyan G.**, N. Ağbalyani namaknerë Av. Isahakyanin // Er., Banber Erewani hamalsarani», 1989, N 2, էջ 57-64:
2. **N. A.**, Hay tarāpank' i ergičë // «Zangak» òrat'ert', T' iflis, 1908, N 2:
3. **N. A.**, Y. Yovhannisean // «Horizon», T' iflis, 1913, N 90:
4. **N. A.**, Al. Çatowrean, «Horizon» òrat'ert', T' iflis, 1917, N 72:
5. **Ağbalean N.**, Erg ow vërk' , «Mowrč», T' iflis, 1898, N 6, էջ 839-855:
6. **Ağbalean N.**, Erg ow vërk' ic' yeto, «Banber grakanowt' ean ew arwesti», S-Pet., 1904, B girk' , էջ 189-198: